

ԱՐՏԱՔԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԳՆԱՀԱՏՈՒՄ

4-րդ դասարան

Մ Ա Յ Ր Ե Ն Ի

ԹԵՍ 2

Շրջան, քաղաք _____

Ուսհաստատություն _____

Դասարան _____

Ա. Ա. Հ. _____

Ամսաթիվ _____

Սիրելի՛ աշակերտ

Թեստ-գրքույկն ընդգրկում է 15 առաջադրանք:

1-6-րդ առաջադրանքները կատարել ըստ տրված տեքստի:

1-3-րդ, 5,6-րդ և 15-րդ առաջադրանքներում գրել պատասխանը:

4-րդ և 9-12-րդ առաջադրանքներում տրված են պատասխանի տարբերակներ: Պահանջվում է ճիշտ պատասխանի համարը (համարները) վերցնել շրջանակի մեջ: Եթե գտնում եք, որ սխալ եք նշել, նշված պատասխանի համարի վրա դնում եք X նշանը ~~3~~ և նոր շրջանակի մեջ վերցնում ճիշտ պատասխանի համարը:

7,8-րդ և 14-րդ առաջադրանքները լրացնել:

13-րդ առաջադրանքներում կատարել համապատասխանեցում:

Թեստ գրքույկի յուրաքանչյուր առաջադրանքի ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր, սխալը՝ 0:

Թեստ գրքույկի առավելագույն միավորը 15:

Աշխատանքի կատարման համար տրվում է 45 րոպե:

Ցանկանում ենք հաջողություն

1-6-րդ առաջադրանքները կատարել ըստ տեքստի

Մի մարդ իր այգում տնկեց մի ուռենի և սկսեց խնամել: Դա հազվագյուտ ուռենի էր: Նա ամեն օր ջրում էր և խնամում էր փոքրիկ տնկին: Եղավ այնպես, որ մարդը մի շաբաթով պետք է գնար ուրիշ տեղ : Նա ծառային հանձնարարում է խնամել տնկին. ամեն օր ջրել և հոգ տանել, որ հարևանի երեխաները չտրորեն, չկտորեն, հողից չհանեն:

Մի շաբաթ հետո տերը վերադառնում է: Նա անմիջապես գնում է այգի՝ տեսնելու տնկին: Տնկին տեղում էր, բայց խիստ թառամած:

Տերը բարկանում է ծառայի վրա, որ չի խնամել տնկին: Նա պատասխանում է.

-Ո՛չ, ես միշտ ջրել եմ, ինչպես ասել եք, հոգ եմ տարել, անընդհատ հետևել եմ: Առավոտից մինչ երեկո դուրս եմ եկել պատշգամբ, նայել, որ երեխաները չվնասեն: Իսկ երբ մթնել է, հանել եմ հողից, տարել տուն և փակել փոքրիկ արկղում:

1-3-րդ առաջադրանքներում գրել պատասխանը

1. Ինչպիսի՞ն էր ուռենին:

Պատասխան՝ _____ :

2. Ի՞նչ է հանձնարարում տերը ծառային, երբ տեղ է գնում:

Պատասխան՝ _____ :

3. Երբ տերը վերադառնում է, նա անմիջապես որտե՞ղ է գնում:

Պատասխան՝ _____ :

4. *Ճիշտ պատասխանի համարը վերցնել շրջանակի մեջ:*

Ի՞նչ վիճակում է լինում տնկին:

- 1) Փարթամ և կանաչ
- 2) Խնամված և ջրված
- 3) Խիստ թառամած

5,6-րդ առաջադրանքներում գրել պատասխանը

5. Տեքստից դուրս գրել մեկ ածանցավոր բառ և բաժանել բաղադրիչների:

Պատասխան՝ _____ :

6. Տեքստից դուրս գրել մեկ նախադասություն և ընդգծել ստորոգյալը:

Պատասխան՝ _____ :

7, 8 -րդ առաջադրանքներում լրացնել աղյուսակը

7. Տրված բառերով և ածանցներով կազմել նոր բառեր:

<i>Արմատ</i>	<i>Վերջածանց</i>	<i>Նոր բառ</i>
թուփ	ավոր	
շուն	ավետ	
բույր	ենի	
զլուխ	իկ	

8. Խմբավորել հետևյալ բառերը:

բազմերանգ, ծանր, ծաղկառատ, նվազ, առվակ, կանաչապատ, ծյուն, հայկական, մեղմորեն

պարզ	բարդ	ածանցավոր

9, 10-րդ առաջադրանքներում ճիշտ պատասխանի համարը վերցնել շրջանակի մեջ

9. Նախադասությանը համապատասխանող բառն է՝

Ձուկ որսալու համար շատ **1) որդ, 2) որթ** է պետք:

10. Ո՞ր բառակապակցության մեջ է ածականը գործածված փոխաբերական իմաստով:

- 1) ծանր կապոց
- 2) նուրբ ձեռքեր
- 3) գեր մարդ
- 4) մռայլ ամպ

11, 12-րդ առաջադրանքներում ճիշտ պատասխանի բոլոր համարները վերցնել շրջանակի մեջ

11. Ո՞ր բառերի ուղղագրությունն է ճիշտ:

- 1) սառնօրակ, 2) դաթար, 3) միջօրե, 4) գգվել, 5) վերչապես, 6) վերադարձ, 7) հաղթել

12. Ո՞ր բառակապակցություններն են դարձվածքներ:

- 1) ջուրը թափել, 2) բերանը սրբել, 3) լեզուն կծել, 4) աչքով անել, 5) անելիքը կշռադատել, 6) բախտը բերել, 7) թև առնել

13. Համապատասխանեցնել.

Բառեր

- 1) ընկեր
- 2) հարուստ
- 3) պարզ

Հոմանիշներ

- ա) թշնամի
- բ) աղքատ
- գ) պղտոր
- դ) ունևոր
- ե) բարեկամ
- զ) վճիտ

Պատասխան՝ 1-____, 2-____, 3 -____

14. *Լրացնել.*

մոլեզուն բառի բացատրությունն է՝ _____ :

15. *Գրել պատասխանը:*

Ո՞ր ստեղծագործությունից է մեջբերումը:

«Պարոցում կա երգի ժամ, և դասատուն մեր սիրելի գրող Ղազարոս Աղայանի որդին է՝ Մուշեղ Աղայանը: Նա դաշնամուր է նվագում, իսկ երեխաները երգում են ժողովրդական երգեր»:

Պատասխան՝ _____ :

Լրացնում է ստուգողը

Ընդհանուր միավորը	
Գնահատականը 10 բալանոց մոդակով	

Ստուգող՝ _____

Ա.Ա.Հ

ստորագրություն